# Համաձայնագիր N ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-04/23-01

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-04/23» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «16» հունվարի 2023թ.

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկը, ի դեմս խորհրդի նախագահի Արա Շիրինյանի, որը գործում է ՀՀ կառավարության 2017 թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված 1-ով սահմանված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի և Հանրային հեռարձակողի խորհրդի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Մ. Սարդլիշվիլիի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (կողմերից յուրաքանչյուրն առանձին հիշատակման ժամանակ այսուհետ նաև՝ Կողմ, համատեղ հիշատակման ժամանակ այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով Կողմերի միջև 2022 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված պետության կարիքների համար հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցման պետական գնման N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-04/23» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.13 կետով, ինչպես նաև հաշվի առնելով, որ նախատեսվել են ֆինանսական միջոցներ՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին.

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրում կատարվում են հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում և Հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն Համաձայնագրի համապատասխանաբար Հավելված 1-ի և Հավելված 2-ի:
2. Պայմանագրի 7.1 կետի առաջին պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ. «Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են նաև 2023 թվականի հունվարի 1-ից սույն պայմանագրի առարկայի շրջանակներում կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ»:
3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Պայմանագրի՝ սույն համաձայնագրով չփոփոխված դրույթները մնում են անփոփոխ:
5. Սույն Համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ | «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 | ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011430247 | Հ/Հ 1930037486400100 |
| ՀՎՀՀ 01539597 | ՀՎՀՀ 01574061 |
| Խորհրդի նախագահ՝ Ա. Շիրինյան | Գործադիր տնօրեն՝ Մ.Սարդլիշվիլի |

*Հավելված N 1*
*«16» հունվարի 2023 թ. կնքված*
*N ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-04/23-01 համաձայնագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1. | 92221100/502 | Հաճախականությունների կամ՝ հնարավոր այլ տեխնիկական միջոցներով (հաղորդիչ, արբանյակ, մալուխային ցանց, համացանց և այլն) Կրթական-մշակութային տեսալսողական ծրագրով 6570 ժամ ընդհանուր տևողությամբ (ներառյալ պրոֆիլակտիկ աշխատանքների իրականացման համար և այլ տեխնիկական պատճառներով թույլատրելի տարեկան ընդհանուր 24 ժամը չգերազանցող ընդհատումների ժամանակահատվածը) Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից հաստատված հաղորդացանցով նախատեսված տեսալսողական հաղորդումների ապահովում: | դրամ | 206,102,100.0 | 1 | ՀՀ, ք. Երևան, Հայկ Հովսեփյան 8 | 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում ընդգրկված յուրաքանչյուր օր. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430247
ՀՎՀՀ 01539597
Խորհրդի նախագահ՝ Ա. Շիրինյան

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930037486400100
ՀՎՀՀ 01574061
Գործադիր տնօրեն՝ Մ.Սարդիշվիլի

*Հավելված N 2*
*«16» հունվարի 2023 թ. կնքված*
*N ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-04/23-01 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 92221100/502 | հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ | 16,375,227.0 | 32,185,791.0 | 49,690,344.0 | 65,500,908.0 | 84,134,787.0 | 101,074,677.0 | 117,449,904.0 | 136,083,783.0 | 152,459,010.0 | 170,528,226.0 | 187,468,116.0 | 206,102,100.0 | 206,102,100.0 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430247
ՀՎՀՀ 01539597
Խորհրդի նախագահ՝ Ա. Շիրինյան

**ԿԱՏԱՐՈՂ**

«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930037486400100
ՀՎՀՀ 01574061
Գործադիր տնօրեն՝ Մ.Սարդիշվիլի